ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2021 թվականի N 1572-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1327-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ ռիսկերի կառավարման համակարգի օգտագործման և մաքսային մարմինների կողմից մաքսային հսկողության ձևերի և միջոցների կիրառման ուղեցույցը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 24-ի N 236 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1327-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Սույն հավելվածի 6-րդ կետում նշված մաքսային հսկողության ընթացակարգերին զուգահեռ ռիսկերի կառավարման համակարգում ռիսկի պրոֆիլներին համապատասխան՝ մաքսային հայտարարագրի կամ ապրանքների բացթողման նպատակով ներկայացված մաքսային այլ փաստաթղթի համար ձևավորվում են ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային հսկողության նպատակով ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցումներ, որոնք ներառվում են հսկողության ակտում:

Հսկողության ակտում ներառված՝ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցումները հասանելի են մաքսային մարմնի՝ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո հսկողություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնատար անձանց (այսուհետ՝ ստուգում իրականացնող պաշտոնատար անձ), որոնք տվյալ ցուցումներին համապատասխան իրականացնում են ապրանքների բացթողումից հետո մաքսային, այլ փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստուգում (ուսումնասիրում)՝ օրենսգրքի 324-րդ և 326-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերը կամ տեղեկությունները ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից պահանջվում և ստացվում են օրենսգրքի 340-րդ հոդվածով սահմանված կարգով: Նշված գործողությունների իրականացումից հետո ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից հսկողության ակտում լրաց վում են ռիսկի պրոֆիլի համաձայն ձևավորված՝ ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո մաքսային հսկողության նպատակով ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման ցուցումների համաձայն իրականացված՝ ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման արդյունքները՝ օրենսդրությամբ սահմանված ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխան նկարագրերը մուտքագրելու միջոցով՝ համաձայն սույն հավելվածի 20-րդ կետով սահմանված ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման արդյունքների նկարագրի դասակարգչի:

Ապրանքների և (կամ) տրանսպորտային միջոցների բացթողումից հետո ռիսկերի պրոֆիլներին համապատասխան մաքսային հսկողության օբյեկտների, ձևերի և (կամ) միջոցների ընտրության ժամանակ մաքսային մարմինների կողմից իրականացվող գործառնությունների հերթականությունը սահմանում է մաքսային մարմնի ղեկավարը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

27.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 28 սեպտեմբերի 2021 թվական: